

«ՎԱՐԴԱՆԱՆՔ» ԿՐԹԱՅԱՄԱԼԻՐ



ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «ՄԱՆԿԱԿԱՆ ԱԳՐԵՍԻԱՆ ՆԱԽԱԴԴՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ»

ԿԱՏԱՐՈՂ՝ *Գոհար Մանգասարյան*

ՂԵԿԱՎԱՐ՝ *Կիմա Գևորգյան*

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....2

ԳԼՈՒԽ 1: ԻՆՉ Է ԱԳՐԵՍԻԱՆ: ԱԳՐԵՍԻԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

1.1. Հայտնի հոգեբանների տեսությունները ագրեսիվության մասին:.....3

1.2. Ագրեսիայի տեսակները:.....5

1.3. Ագրեսիան մանկական տարիքում:.....6

ԳԼՈՒԽ 2: ՄԱՆԿԱԿԱՆ ԱԳՐԵՍԻԱՅԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ:

2.1. Ընտանեկան դաստիարակության ազդեցությունը մանկական ագրեսիայի առաջացման գործում:.....9

2.2. Տեղեկատվական աղբյուրները մանկական ագրեսիայի պատճառ:.....11

2.3 Ինչ կարող է անել մանկավարժական աշխատողը ՆՈՒՅ-ում երեխաների ագրեսիայի հաղթահարման համար.....12

ԳԼՈՒԽ 3: ԵՐԵԽԱՅԻ ԱԳՐԵՍԻՎ ՎԱՐՔԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆ ՈՒ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ:

3.1. Մանկան հոգեբանության հետազոտման մեթոդները:.....14

3.2. Խաղեր և վարժություններ երեխայի ագրեսիվ վարքի հաղթահարման համար:.....16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....18

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ագրեսիվ վարքը մեծահասակները հաճախ շփոթում են Յտ. ճգնաժամի հետ, սակայն դրանք նույնականացնելը սխալ է : Յտ ճգնաժամը երեխաների ներդաշնակ զարգացման փուլերից մեկն է, որը չունի անընդհատ բնույթ, այսինքն մեծահասակի համբերատար աշխատանքի արդյունքում հաղթահարվում է: Յտ ճգնաժամի նախանշաններն են՝ նեգատիվիզմը, համառոտությունը, ինքնակամությունը, ըմբոստությունը, հենց այս նշաններն էլ շփոթության մեջ է գցում մեծահասակներին: Յտ ճգնաժամը օգնում է երեխաներին լինել ինքնուրույն , ձևավորում է «Ես» կոնցեպցիան:

Ի տարբերություն Յտ ճգնաժամին բնորոշ նեգատիվիզմին, ըմբոստությանը, ագրեսիվ վարքը համարվում է զարգացման խանգարում: Չարգացման խանգարում է նաև վախը, տագնապը, ուշադրության պակասը, աուտիստիկ ասպեկտրի խանգարումը:

Այս աշխատանքը նվիրված է մանկական ագրեսիային: Ընդհանրապես «ագրեսիա» տերմինը ստուգաբանվում է որպես լատիներեն *aggressio` «հարձակում»*:

Ագրեսիայի մասին խոսել են շատ հոգեբաններ և մանկավարժներ, որոնց տեսությունները կուսումնասիրենք այս աշխատանքում: Ուշագրավ են նաև ագրեսիայի առաջացման պատճառները և այն ուղիները , որոնք կօգնեն մեղմել մանկական ագրեսիան: Հարկ է նշել, որ մանկական ագրեսիան հաղթահարելի է և դրա հաղթահարման ամենահարմար տարիքն է նախադպրոցական տարիքը: Հենց այս տարիքում է, որ մասնագետի հոգատար աշխատանքի արդյունքում կարելի է խուսափել, որ այն չվերածվի բնավորության կայուն գծերի:

ԳԼՈՒԽ 1.

ԻՆՉ Է ԱԳՐԵՍԻՎԱՆ: ԱԳՐԵՍԻՎԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

ՀԱՅՏՆԻ ՀՈԳԵԲԱՆՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱԳՐԵՍԻՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:

Ագրեսիա հասկացությունն ունի բազմաթիվ սահմանումներ: Չնայած տարբեր հեղինակների կողմից ագրեսիա հասկացության սահմանման տարբերություններին, բոլորի մոտ առկա է մեկ ընդհանուր գաղափար, այն է՝ ագրեսիան գործողություն է, որի նպատակն է ուրիշին վնաս պատճառելը:



Ընդհանրապես ագրեսիայի բնույթը բացատրող տեսությունները կարելի է բաժանել 3խմբի: Դրանք են.

- 1.Բնազդների տեսություն ,
- 2.Ֆրոլստրացին տեսություն,
- 3.Սոցիալական ուսուցման տեսություն:

Բնազդերի տեսության հիմնադիրներից մեկը 2. Ֆրեյդն է: Նա գտում էր, որ մարդու մեջ գոյություն ունեն երկու շատ ուժեղ բնազդներ.

-սեռական բնազդ/լիբիդո/

-մահվան բնազդ/թանաթոս/:

Սեռական բնազդը դիտարկվում է որպես ստեղծարար ձգտումներ՝ սեր հոգատարություն, մտերմություն: Մահվան բնազդը իր մեջ կրում է ոչնչացման էներգիա և խնդիրն է հանդիսանում «օրգանապես կենդանի ամեն բան հասցնել մահվան վիճակի», չարություն, ատելություն:Եվ եթե մահվան բնազդը կապված է լինում սոռականության հետ, ապա այն ընդունում է սադիզմի և մազոխիզմի ձև:

Բայց Ֆրեյդի տեսությունն ունի լուրջ թերություններ, այն հիմնվում է վերացական դատողությունների վրա և չունի Էմպիրիկ (փորձարարական) ապացույցներ:

Ֆրոստրացիոն(ֆրոստրացիա-անհաջողություն, խաբկանք, կարիքների չբավարարման պատճառով առաջացած հոգեկան վիճակ) տեսությունը համարվում է ագրեսիայի և բռնության վերաբերյալ ընդհանուր տեսություն: Այս տեսության համաձայն ագրեսիվ վարքի ի հայտ գալը պայմանավորված է ֆրոստրացիայի առկայությամբ և հակառակը, ֆրոստրացիայի առկայությունը միշտ իրենից ենթադրում է որոշակի ագրեսիա: Ֆրոստրացիան կարող է առաջ բերել տարբեր ռեակցիաներ և ագրեսիան դրանցից մեկն է : Սակայն ֆրոստրացիա հասկացության միանշանակ սահմանում գոյություն չունի: Կարևոր հանգամանք է անհատի բնավորությունը: Օրինակ՝ շատակերը կբարկանա, եթե սնունդ չստանա, ժլատը կդառնա ագրեսիվ, եթե չկարողանա սակարկել և Էժան գնել իր ուզածը:

Բիհեյվորիստ Ա. Բասը ագրեսիան սահմանում է որպես «վարք, որն առաջ է բերում զայրույթ և իրական վնաս է հասցնում այլ օրգանիզմներին»:(այս տեսությունն ընդունվել է բոլոր հոգեբանների կողմից):

Բիհեյվորիստական տեսությունը կարևորում է մարդու վարքագիծը տվյալ պահին:Այս տեսության տեսանկյունից ագրեսիան դիտարկվում է որպես վարքային խանգարում: Դրա համաձայն «մարդը զգում, մտածում և գործում է այնպես , ինչպես ինքը ճիշտ է համարում մոտակա ցանկալի նպատակին հասնելու համար»: Կարքագիծը որոշվում է միջավայրի պայմաններով:

Ֆրոմը Գտնում էր որ նախապատմական մարդիկ ովքեր զբաղվում էին որսորդությամբ և հավաքչությամբ նվազագույն չափով էին դրսևորում ագրեսիա և ապակառուցողական վարք: Նա ասում էր. «Ես վստահ եմ , որ դաժանությունը և ապակառուցողականությունը ի հայտ են գալիս մայն աշխատանքի բաժանման, արտադրության աճի, հիերարխիկ համակարգ ունեցող պետությունների և Էլիտար խմբերի հայտնվելու պատճառով: Մարդկային ագրեսիվությունը պայմանավորված է նրանով, որ մարդն ինքն է ստեղծել իր կյանքի պայմանները և որ այդ պայմաններն աջակցում են ագրեսիվության դրսևորմանը:

ՍՍոցիալական ուսոիցման տեսության մեջ, որն առաջարկվել է Ա. Բանդուրայի կողմից, ագրեսիան դիտարկվում է որպես յուրահատուկ սոցիալական վարքագիծ: Ըստ Բանդուրայի ագրեսիան ձեռք է բերվում կենսական գործոնների (հորմոնների, նյարդային համակարգի առանձնահատկություններ), սովորեցման փորձի միջոցով: Քանի որ

Բանդուրան ագրեսիան դիտարկում է որպես վարքի սովորեցվող ձև, դրա թուլացման միջոցները նա առաջարկում է, որպես գործողությունների շարք՝ ուղղված այն պայմանների վերացմանը, արանք կապված են ագրեսիայի ամրապնդման հետ: Այս մոտեցման կողմնակից է Բերկովիցը, որը գտնում էր, որ «շատ ագրեսիվ ծնողներ փոխանցում են իրենց ագրեսիան երեխաներին: Դա զարմանալի չէ, քանի որ այն, թե ինչպես են մեծանում երեխաները և ինչպիսի փորձ են ձեռք բերում ընտանիքում, ազդում է նրանց կողմնորոշման վրա»:

Այսպիսով դիտարկելով ագրեսիայի վերաբերյալ եղած տեսությունները կարելի է ընդհանրացված ձևով ասել, ագրեսիան վարքի ձև է, ուղղված որևէ մեկին վնասելուն կամ վիրավորելուն:

ԱԳՐԵՍԻՎՅԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հոգեբանության մեջ առանձնացնում են ագրեսիայի բազմաթիվ տիպեր և տեսակներ:

Ելնելով վարքի ձևերից, առանձնացնում են .

1. *Ֆիզիկական ագրեսիա*, որը ենթադրում է ֆիզիկական ուժի կիրառում այլ անձի նկատմամբ,
2. *վերբալ ագրեսիա*, որը ենթադրում է բարոյական զգացմունքների արտահայտում վերբալ ռեակցիաների միջոցով:

Ելնելով դրսևորման ակնհայտությունից առանձնացնում են.

1. *ուղղակի*, որն ուղղված է ինչ որ մեկի դեմ,
2. *անուղղակի*, որը դրսևորվում է գործողություններում, որոնք շրջանցող բնույթ ունեն (չար կատակ, բանբասանք):

Ելնելով նպատակից առանձնացնում են,

1. *թշնամական ագրեսիա*,
2. *ինստրումենտալ ագրեսիա*:

Թշնամական ագրեսիան ուղղված է գրհին գիտակցված ցավ և վնաս պատճառելուն՝ վրեժ լուծելու կամ հաճույք ստանալու համար:

Ինստրումենտալ ագրեսիան ուղղված է նպատակի իրականացմանը, բայց այդ նպատակը վնաս հասցնելը չէ, այն համարվում է ադապտացիայի

անհրաժեշտ մեխանիզմն և մղում է շրջապատող աշխարհում մրցակցության:

Ըստ նախաձեռնողականության ագրեսիան լինում է.

1. *Նախաձեռնողական*
2. *պաշտպանական:*

Ա. Բասը և Ա. Դարկին առանձնացնում են ագրեսիվության հետևյալ տեսակները.

- Ֆիզիկական
- Միջնորդավորված(չար կատակ),
- Չայրույթ,
- Նեգատիվիզմ,
- Վիրավորանք(նախանձ),
- Մեղքի զգացում(ագրեսիան ուղղված է սեփական անձի հանդեպ) և այլն:

Ըստ Ֆրոմի ագրեսիան լինում է.

- ա) *բարորակ,*
- բ) *պաշտպանական,*
- գ) *չարորակ:*

Բարորակ ագրեսիան իր հերթին լինում է . կեղծ, որը կարող է վնասել, բայց հիմքում չկան չար մտադրություններ, չնախատեսվաշ, օրինակ՝ պատահական վիրավորանք, խաղային՝ անհրաժեշտ է ուսումնական թրեյնինգներում, չունի բացասական մոտիվացիա, ինքնահաստատման ագրեսիան կեղծ ագրեսիայի տեսակ է , որը տանում է դեպի ինքնահաստատում:

Պաշտպանական ագրեսիան համարվում է կենսաբանական հարմարման գործոն:

Չարորակ ագրեսիայի դրսևորման ձևերից է սադիզմը, նարցիսիզմը:



ԱԳՐԵՍԻՎՆ ՄԱՆԿԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

Ագրեսիան դիտվում է նաև մանկական տարիքում: Երեխաներն ագրեսիվ չեն ծնվում: Սովորաբար երեխաների հակազդումները կրում են պաշտպանական բնույթ: Սակայն միջավայրի ազդեցության ներքո այդ հակազդումները կարող են վերածվել տարբեր

վտանգավոր գործողությունների: Մանկական ագրեսիան կարող է լինել ֆիզիկական (խփել, թփել, կծել և այլն) և վիրավորանք, ինչպես հասակակակիցների, այնպես էլ մեծահասակների հանդեպ (կռիվ սիրելի խաղալիքի համար, խաղում գլխավորը լինելու համար և այլն): Այս պահվածքը կարելի է հանդիպել գրեթե բոլոր երեխաների մոտ, սակայն որոշ երեխաների մոտ այն ավելի ցայտուն է:

Խ.Ա. Ֆուրմանովը առանձնացրել է մանկական ագրեսիայի 2 տեսակ.

- *սոցիալականացված*, ըստ որի այս ագրեսիան երեխաները իրականացնում են ուժադրություն գրավելու նպատակով և հանգստանում են միայն իրենց նպատակին հասնելուց հետո,
- *ոչ սոցիալականացված*, ըստ որի այս ագրեսիայի առաջացման պատճառը հոգեբանական տարբեր վնասվածքներն են: Այսպիսի ագրեսիան կարելի է առաջանալ հանկարծակի, որևէ սթրեսային իրավիճակից:

Ըստ Ֆուրմանովի մանկական ագրեսիան նպատակ չունի վնասել որևէ մեկին, այն պարզապես պաշտպանական մեխանիզմ է. օրինակ՝ 1-2 տ. երեխան ագրեսիա է դրսևորում իր խաղալիքը ուրիշին չտալու համար:

Ագրեսիվ երեխան ոչ միայն խնդիրներ է ստեղծում շրջապատի համար, այլ նաև վնասում է ինքն իրեն: Ժամանակի ընթացքում ագրեսիան վերածվում է բնավորության, որն էլ կարող է խանգարել երեխայի հետագա ներդաշնակ զարգացմանը: Եթե վաղ տարիքում ագրեսիան հիմնականում իրավիճակային է և կապված է կոնկրետ իրավիճակում նրա ցանկության բավարարմանը՝ օրինակ ստանալ խաղալիքը կամ գրավել ծնողի ուշադրությունը, ապա ավելի մեծ տարիքում այն դառնում է դիմացինին հատուկ ցավ պատճառելու ձև և ստանում է ավելի վտանգավոր ձև:

Անկախ ագրեսիայի տեսակից, բոլոր երեխաներին միավորում է մեկ հատկանիշ՝ դիմացինին լսելու և հասկանալու անկարողություն: Երեխան պահանջում է կենտրոնացում միայն իր անձի և իր պահանջմունքների

բավարարման ուղղությամբ: Նա դիմացինին ընկալում է կամ որպես խոչընդոտ իր ցանկություններին հասնելու համար, կամ կարծում է, որ չի ստանում համապատասխան ուշադրություն , կամ մտածում է, որ մյուսները ուզում են վնասել իրեն: Անընդհատ թշնամական վերաբերմունքը երեխայի կողմից իր շրջապատի մարդկանց և երեխաների հանդեպ, խանգարում է նրան կառուցել ճիշտ և բարենպաստ փոխհարաբերություններ հասակակիցների և մեծահասակների հետ, հասկանալ դիմացինի զգացմունքները և ստանալ ցանկացածը առանց վեճի և ագրեսիայի:

Ագրեսիան անձի կարևոր հատկություն է, առանց որի հնարավոր չէ հասնել արդյունքի ուսման մեջ, սպորտում, դրսևորվել որպես լիդեր շրջապատում, բայց այն պետք է լինի խելամիտ և չափավորված և չվնասի մյուսներին: Այդպիսի «խելամիտ ագրեսիայի» ձևավորման համար ամենաբարենպաստ տարիքը հենց նախադպրոցական տարիքն է:

ԳԼՈՒԽ 2.

ՄԱՆԿԱԿԱՆ ԱԳՐԵՍԵԻՎՅԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Մանկական ագրեսիան երեխաների մոտ առաջանում է Յիմնական աղբյուրներից.

1. Ընտանիքից- երբ ընտանիքում ագրեսիվ վարք են դրսևորում և երեխաներն էլ ընդօրինակելով վարվում են նույն կերպ:
2. Հասակակիցների հետ շփումից- երբ երեխաները շատ արագ կարողանում են ընդօրինակել հասակակիցների վարքը և երբ դա ագրեսիվ է ապա երեխան կրում է այնպիսի վարք, ինչպիսին հասակակցինն է:
3. Հեռուստատեսային ագրեսիա- երեխաները երկար ժամանակ անցկացնելով հեռուստացույցի առջև կարող են ընդօրինակել հեռուստատեսային ագրեսիա պարունակող վարքային մոդելները:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԿԱԿԱՆ ԱԳՐԵՍԻՎՅԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Մանկական ագրեսիայի առաջացման գործում իր ուրույն տեղն ունի ընտանիքը:



Գ. Պ. Բոչկարևը առանձնացրել է այնպիսի ընտանիքի մոդելներ, որոնք նպաստում են երեխայի մոտ ագրեսիայի ձևավորմանը: Դրանք են.

1. *բացասական հուզական մթնոլորտով ընտանիքներ*. այստեղ ոչ միայն ծնողները անտարբեր են, այլ նաև կոպտում են և վիրավորում երեխաներին:

2. *ընտանիքներ, որտեղ բացակայում է հուզական կապը, չկա հուզական կապ ծնողի և երեխաների միջև:*
3. *անառողջ բարոյական մթնոլորտ, այս ընտանիքներում երեխաները ընդօրինակում են սոցիալական բացասական վարք:*

Նախադպրոցական մանկավարժության մեջ առանձնացված են ընտանիքում անընդունելի դաստիարակության մի քանի տեսակներ, որոնք պատճառ են հանդիսանում ագրեսիվ, նույն ինքը «դժվար» դաստիարակվող երեխաների ձևավորման: Ընտանեկան դաստիարակության այդպիսի ձև է.


- Գերհովանավորչությունը. երեխան մեծանում է չափազանց եսասեր, սովորում է լինել ուշադրության կենտրոնում և զայրանում է անուշադրության մատնվելու դեպքում:
- Բարձրթողություն. երեխան մեծանում է անկանոն և չվերահսկվող պայմաններում, դառնում է անկազմակերպ, անկարգապահ, հաճույքներով ապրող անձնավորություն:
- «Մոխրոտի» դաստիարակություն. ընտանիքներում տիրում է բացասական/սառնասիրտ/ հուզական մթնոլորտ: Այսպիսի ընտանիքում երեխային բնորոշ է գերգրգռվածություն, նյարդային անկայունություն, հաղորդակցման դժվարություններ:
- «Դաժան դաստիարակություն». անընդհատ պատժելիության գերակայումը ձևավորում է վախով պայմանավորված «օրինակելի» վարքագիծ: Դաժան դաստիարակության դեպքում երկատուվում է երեխայի վարքագիծը, մտածելակերպը և ձևավորվում է նենգ և աշխարհին բացասաբար տրամադրված անձնավորություն:

Երեխաները, որոնք մեծանում են այսպիսի ընտանիքներում և դաստիարակվում անընդունելի դաստիարակության ձևերով, ձեռք են բերում ագրեսիվ վարք և դառնում դժվար դաստիարակվող երեխաներ: Այսպիսի երեխաներին բնորոշ է հասակակիցների հետ հարաբերվելու ցանկության բացակայություն, անկարգ, չենթարկվող վարքագիծ, խանգարելու, բուրբին ցավ պատճառելու, բացասակաբ արարքներով ուշադրության արժանանալու միտում, ոչ համարժեք հուզական դրսևորում, վարքի շեղումներ:

Ծնողներն են երեխաներին դաստիարակող առաջին մանակավարժները: Ըստ Ռուսոյի, յուրաքանչյուր հաջորդ դաստիարակող ունի ավելի թույլ մանկավարժական ներգործություն երեխաների դաստիարակությանը, քան նախորդը:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՄԱՆԿԱԿԱՆ ԱԳՐԵՍԻԱՅԻ ՊԱՏՃԱՌ

Այսօր նախադպրոցականների առօրյայի անբաժան մասն են հեռուստացույցը և համացանցը: Ծնողները հաճախ են նշում, որ երեխաներն ընդօրինակում են տարբեր հաղորդումներից տեսած բացասական վարքը: Ըստ Իլինի, այն երեխաները, ովքեր քնելիս դիտում են ագրեսիա պարունակող ֆիլմեր, նրանց մոտ ագրեսիվության մակարդակը ավելի բարձր է: Սակայն Ֆուրմանովը նշում է, որ եթե երեխայի պահանջմունքները ընտանիքում բավարարված են և նա չունի ագրեսիվության արդեն իսկ ձևավորված բարձր մակարդակ, ապա նա չի կարող կրկնօրինակել բացասական վարքը:



Ըստ ֆիզիոլոգների տեսության երեխան հեռուստատեսությամբ ագրեսիվ վարք տեսնելով ապրում է մեծ ցնցում և դա ուղեկցվում է արյան մեջ մի շարք հորմոնների՝ ադրենալին, նորադրենալին, էնդոֆին, ուղեկցությամբ և երբ այս ցնցումը երեխան ապրում է անընդհատ, նրա օրգանիզմը հարմարվում է դրան, ստեղծելով ֆիզիոլոգիական կաղվածություն և օրգանիզմը անընդհատ սկսում է նոր փնտրտուքներ:

Համացանցային կախվածության բացասական կողմերից մեկն է նաև այն, որ երեխան դժվարանում է մատուցվող տեղեկությունը խոսքի միջոցով ընկալել, քանի որ հեռուստացույցը նրանց ցանկացած տեղեկություն մատուցել է պատկերների միջոցով:

1990թ. ամերիկացի գիտնականների կողմից իրականացվեց դաժան հետազոտություն, որի նպատակն էր մանկատան երեխաներին սովորեցնել խոսել հեռուստացույցի միջոցով: Մեծերը ինսամում էին երեխաներին, բայց չէին խոսում նրանց հետ, այդ դերը կատարում էր հեռուստացույցը: Հետազոտության արդյունքում պարզվեց, որ երեխաները չսովորեցին խոսել, ավելին՝ հուզական կապի բացակայությունը հանգեցրեց նաև հոգեբանական և ֆիզիկական զարգացման լուրջ խնդիրների:

Լրատվամիջոցների ազդեցությամբ ագրեսիայի դրսևորումների առաջացման դեպքեր նկատել է ֆրանսիացի սոցիոլոգ Գաբրիել Թարդը, դեռ 19-րդ դարի վերջում: Թարդը նշում էր, որ խոշոր հանցագործության լայն լուսաբանումն առաջացնում է նմանատիպ հանցագործությունների կրկնության ողջ երկրում:

Ա. Բանդուրան ագրեսիայի կրկնօրինակման օրինակը ցույց տալու նպատակով կատարեց մի գիտափորձ, որի ժամանակ երեխաների առաջին խմբի մոտ նա հանգիստ խաղում էր տիկնիկի հետ, իսկ մյուս խմբի մոտ նույն տիկնիկի հետ խաղալիս հարվածում էր և վնասում: Երբ երեխաներին առաջարկվեց խաղալ նույն տիկնիկի հետ ինքնուրույն, ապա այն երեխաները, որոնք ակնատես էին եղել ագրեսիվ վարքի, իրենք նույնպես նման վարք էին դրսևորում տիկնիկի նկատմամբ:



Ինչ կարող է անել մանկավարժական աշխատողը ՆՈՒՅ-ում երեխաների ագրեսիայի հաղթահարման համար

Յուրաքանչյուր մանկավարժ կիսով չափ հոգեբան է, կարծում եմ, և եթե մանկավարժը չկարողանա հասկանալ երեխաների հոգին, նրանց հույզերը, զգացմունքները, նա չի կարող դաստիարակել երեխաներին:

Ագրեսիայի կառավարման լավագույն միջոցը, սեփական դրական օրինակն է: Եթե մեծահասակն ունի ինքնակառավարման և ինքնակարգավորման հմտություններ, կարողանում է ժամանակին ճիշտ արձագանքել երեխաների կարիքներին, ագրեսիվ դրսևորումները միանշանակ նվազում են:

Երբ երեխան ցուցաբերում է ագրեսիա, մեծահասակը պետք է՝ ձայնը չբարձրացնի, չգոռա, չցուցաբերի ինքնիշխանություն («Ես ասում եմ, դու պետք է ենթարկվես»), չդրսևորի պատասխան ագրեսիա, չհամեմատի ուրիշների հետ, չներգրավի այլ մարդկանց, չպիտակավորի երեխային («Դու վատն ես») և այլն:

Որոշ երեխաների մոտ վարքի աֆեկտիվ ձևերը(ագրեսիան) իհայտ են գալիս, քանի որ բավականին երկար ժամանակի ընթացքում նրանց որոշ էական պահանջմունքներ մնում են չբավարարված: Այդ իսկ պատճառով այսպիսի երեխաների հետ տարվող աշխատանքը ենթադրում է նրանց ակտիվության նպատակասլաց կազմակերպում, նախաձեռնողականություն, հարգանք նրանց արժանիքների և ինքնուրույն լինելու իրավունքի նկատմանը, համբերատարություն:

Ընդ որում աֆեկտիվ վարք դրսևորող երեխաները ունենում են կամ չափազանց բարձր ինքնագնահատում կամ, ընդհակառակը, խիստ թերահավատ են սեփական ուժերի նկատմամբ: Աֆեկտիվ ապրումների և

վարքի համապատասխան ձևերի տևական ու կրկնվող լինելը հանգեցնում է երեխաների մոտ այլ մարդկանց , սեփական անձի և կատարվող գործողությունների նկատմամբ որոշակի վերաբերմունքի ու դիրքորոշումների ձևավորման: Միայն ժամանակին կատարված մանկավարժական միջամտությունը կարող է լուծել կամ գոնե մեղմել ներքին կոնֆլիկտը և կանխել երեխայի մոտ վարքի աֆեկտիվ ձևերի զարգացումը: Ընդ որում հարկ է նշել, որ հատկապես դժվար երեխաների հետ տարվող աշխատանքում անհրաժեշտ է նուրբ անհատական մոտեցում հանդես բերել, որի համար պահանջվում է.

- ա) ուշադիր ու բարյացակամ վերաբերմունք ցույց տալ երեխաների նկատմամբ,
- բ) հենվել նրա դրական կողմերի վրա,
- գ) ընդգծված վստահություն հանդես բերել նրա բարոյական ուժերի և պոտենցիալ հնարավորությունների նկատմամբ:

ԳԼՈՒԽ 3.

ԵՐԵՒԱՅԻ ԱԳՐԵՍԻՎ ՎԱՐՔԻ ԲԱՑԱՅԱՅՏՈՒՄԸ ԵՎ ՀԱՂԹԱՅԱՐՈՒՄԸ


ՄԱՆԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Մարդու հոգեկան կյանքն ուսումնասիրելու՝ հոգեկան երևույթները դիտարկելու և վերլուծելու համար հոգեբանները, 19-րդ դ. 2-րդ կեսից սկսած, բազմաթիվ մեթոդներ են ստեղծել, որոնք կարելի է բաժանել շխոշոր խմբերի՝ հիմնական մեթոդներ/դիտում, գիտափորձ/ և օժանդակ մեթոդներ/թեստեր, զրույց, հարցաթերթիկներ/:

Դիտումը երեխայի վարքի, հոգեկան դրսևորումների ընկալումն ու գրանցումն է նրա կենսագործունեության բնական տարբեր պայամաններում: Դիտումը կարող է լինել անհատական և խմբային:

Գիտափորձի համար, ի տարբերություն դիտման, հետազոտողն ինքն է ստեղծում հատուկ պայամաններ: Այն լինում է բնական/ուսուցում, խաղ/ և լաբորատոր: Գիտափորձի ժամանակ կիրառվում են բոլոր մեթոդները՝ զրույց, դիտում, թեստավորում: Չրույցը կարելի է անց կացնել ծնողների հետ, իսկ երեխայի հետ՝ խաղի միջոցով:

Հտաքրքիր մեթոդ է նաև «ընտանիքի նկար» թեստը, որն ուղղված է ներընտանեկան հարաբերությունների բացահայտմանը:



ՄԱՆԿԱԿԱՆ ԱԳՐԵՍԻԱՅԻ ՀԱՂԹԱՅԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Ըստ սոցիալական հոգեբանների կան ագրեսիայից ազատվելու հետևյալ ուղիները.

Ֆիզիկական ակտիվություն , որն իջեցնում է ագրեսիայի մակարդակը,

Ագրեսիայից հնարավոր է ազատվել երևակայական գործընթացների միջոցով, երբ ագրեսիան վեր է ածվում սոցիալապես ավելի ընդունելի ձևերի՝ նկարի, ստեղծագործության, խզբզոցի և այլն:

Ըստ ֆրեյդի, եթե ագրեսիան կուտակվում է անձի հոգեկանում, լարվածություն է առաջանում և մարդը կարիք ունի ագրեսիայից ազատվելու, լիցքաթափվելու:

Ագրեսիվ երեխաների հետ աշխատանքները կարող են իրականացվել տարբեր միջոցներով. խրախուսանք, խաղաթերապիա, ավազաթերապիա, հեթիաթաթերապիա:

Խրախուսանքը անհրաժեշ է ցանկացած երեխայի, բայց այն պետք է անել այնքան հմուտ, որ չստանանք հակառակ արդյունքը: Երեխան պետք է իմանա՝ ինչի համար է խրախուսվում և ավելի լավ է ասել ոչ թե «լավ տղա/աղջիկ/ ես», այլ կոնկրետ նշել նրա վարքը, որի համար խրախուսվում է, օրինակ՝ «Ինձ դուր եկավ, որ դու...»:

Հեթիաթը ոչ միայն լավ թերապևտիկ, այլ նաև ախտորոշիչ, զարգացնող, դաստիարակող մեթոդ է: Կարելի է հորինել հեթիաթ հենց «չար» երեխայի մասին և առաջարկել նրան գտնել լուծումը/ավարտել հեթիաթը/:

Ավազաթերապիան, ի սկզբանե, որպես թերապևտիկ միջոց, օգտագործել է անալիտիկ հոգեմանության հիմնադիր Կարլ Գուստավ Յունգը: Ավազով խաղի ժամանակ երեխան հնարավորություն է ունենում դուրս բերելու , արտահայտելու իր ամենախորքային հույզերն ու զգացմունքները, տարբեր բացասական ապրումները: Աննկարագրելի արդյունավետ մեթոդ է ավազաթերապիայի զուգակցումը հեթիաթաթերապիայի հետ:

Խաղաթերապիայի Եությունն է թերապևտիկ միջոցների կիրառման օգնությամբ օգնել երեխաներին դուրս գալ սոցիալական և հոգեբանական դժվարություններից, որոնք խոչընդոտում են անձնային աճին և հոգեհուզական զարգացմանը: Խաղային թերապիա են անվանում բոլոր հոգեթերապևտիկ ուղղությունները, որոնք օգտագործում են խաղը կամ

խաղալիքը: Այն ավելի հաճախ օգտագործվում է նախադպրոկան տարիքի երեխաների հետ աշխատանքում, որը անենահարմար մեթոդներից մեկն է այս տարիքի երեխաների հետ աշխատանքի համար, քանի որ նրանց առաջատար գործունեությունն է խաղը:

ԽԱՂԵՐ, ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՆԿԱԿԱՆ ԱԳՐԵՍԻԱՅԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ

➤ ԾԱՂՐԱԾՈՒՆԵՐԸ ՎԻԻՐԱՎՈՐՈՒՄ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ

Եթե երեխաները հաճախ են իրար վիրավորական բառեր ասում, ապա առաջարկել նրանց դառնալ ծաղրածու և վատ բառեր ասել միմյանց՝ զայրացած ձևով, մրգերի և բանջարեղենների անուններով, օրինակ՝ «դու լուրիկ ես», «դու կաղամբ ես», «դու դդում ես», ապա առաջարկել նույնն անել, բայց արդեն սիրալիք ու բարի ձևով:

➤ ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ՓԱՅՏԻԿ

Երեխաների հետ միասին, որպես խմբային աշխատանք պատրաստել կախարդական փայտիկ և երեխաներին ասել, որ այն կարող ենք օգտագործել այն ժամանակ, երբ պետք հաղթահարենք մեր վախերը, հուզմունքը, կամակորուրթյունը և այլ «վատ» բաներ»:

➤ ԱԾՏԱՐԱԿ

Երեխաները շրջանաձև նստում են և պետք է բոլորով միասին բարձր աշտարակ կառուցեն խորանարդներով: Յուրաքանչյուր երեխան պետք է դնի մեկ խորանարդ, համագործակցելով և միմյանց օգնելով, որ աշտարակը չքանդվի:

➤ ԱՅԾԻԿՆԵՐԸ

Առաջարկել երեխաներին բռնել միմյանց ձեռքերը և գլխով իրար հրել գոռալով ինչպես այծիկները: Սակայն նախապես զգեւշացնել, որ զգուշորեն կատարեն, որ չվնասեն միմյանց:

➤ ՉԱՐ ԱՐԿՂԻԿ

Ազատել երեխային զայրույթից, թույլ տալով նրան գոռալ բոլոր բացասական, ագրեսիվ խոսքերը արկղիկի մեջ/ ավելի լավ է այտեղ քան մյուսների վրա/, ապա փակել արղիկը և բոլոր վատ բառերը պահել այնտեղ:



➤ ՓԱՅՏԱՅԱՏՆԵՐԸ

Երեխաները դառնում են փայտահատներ և վերցնում են իրենց կացիկներն ու սկսում կոտրել փայտը՝ բարձր գոռալով «հաաա, հաաա»: Բարձր ձայնը օգնում է երեխաներին հանել իրենց մեջից բացասական հույզերն ու էմոցիաները:

➤ ԱՂՏՈՒԿ, ՇՇՈՒԿ, ԼՌՈՒԹՅՈՒՆ

Ձեռքում ունենալ կարմիր, կապույտ, դեղին քարտեր: Կարմիր քարտը երեխաները տեսնելով, կարող են գոռալ, վազել, ցատկել, կապույտ քարտ՝ պետք է հանգիստ քայլեն և խոսեն շշուկով, դեղին քարտ՝ լռության ժամանակն է, պետք է լռել և անշարժանալ:



➤ ՁՆԱԳՆԴԻԿ

Տրամադրել երեխաներին թուղթ և առաջարկել այն ճմռթելով պատրաստել «ձնագնդիկ», ապա դրանցով խաղալ, այնպես, ինչպես ձնագնդիկով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, մանական ագրեսիան դաստիարակչական, ընտանեկան, հասակակիցների հետ միջանձնային խնդիրներով պայմանավորված, երեխայի վարքի շեղումն է, որը ենթադրում է գործողություն, որի նպատակն է ուրիշին վնաս պատճառելը: Այսպիսի երեխաները աչքի են ընկնում ամբարտավանությամբ, հոխորտությամբ, խիստ նեղացկոտությամբ:

Ագրեսիվ վարքագիծը երեխաները ձեռք են բերում ընտանիքներում, որոնք որդեգրել են դաստիարակության այնպիսի մոդելներ, որոնք խաթարում են երեխայի ներդաշնակ զարգացումը, այդպիսով պատճառ դառնալով երեխայի աֆեկտիվ վարքի դրսևորումների: Մանկական ագրեսիայի առաջացման պատճառներից մեկն էլ, ինչպես արդեն հայտնի է, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների գերակայումն է նախադպրոցականի առօրյայում, հետևաբար կարևոր է, որ ծնողի կողմից լինի վերահսկողություն, թե ինչ է դիտում երեխան:

Երեխաների ագրեսիվ վարքի կանխարգելման և հաղթահարման գործում մեծ է ոչ միայն ծնողների, այլ նաև մանկավարժական աշխատողների դերը, քանի որ շատ հաճախ ագրեսիան երեխաների մոտ առավել ցայտուն է դառնում մանկապարտեզում, որը երեխայի համար նոր սոցիալական միջավայր է՝ լի խնդիրներով, հակազդումներով, վախերով (մայրիկին կորցնելու վախ, անծանոթների հետ շփում, նոր կարգ ու կանոնի հետևել և այլն): Սա ենթադրում է, որ մեծահասակը պետք է կարողանա ժամանակին, ճիշտ և համբերատար արձագանքել երեխայի կարիքներին, պետք է կարողանա գրագետ աշխատանք տանել ծնողների հետ, քանզի համագործակցված և համբերատար աշխատանքի շնորհիվ միայն կարող է երեխայի ագրեսիվ դրսևորումները նվազել: Պատժելով երեխային մենք զրկում ենք նրան իր սխալը հասկանալու և փոխելու հնարավորությունից: Երեխաների անցանկալի վարքի շտկման համար կան բազում խաղեր և վարժանքներ, որոնք կօգնեն թե՛ ծնողին, թե՛ մանկավարժական աշխատողին հասկանալ և հաղթահարել երեխայի ագրեսիվ վարքի դրսևորումները, այդպիսով նպաստելով հասարակության համար առողջ և պիտանի անհատի ձևավորմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Պետրովսկի Ա. Վ., «Տարիքային և մանկավարժական հոգեբանություն»,
- Նալչաջյան Ա.Ա., «Ընդհանուր հոգեբանության հիմունքներ»,
- Խուդոյան Ս.Ս. , «Անձի զարգացման ճգնաժամային տարիքները»,
- Լ. Ս. Ստեփանյան, «Ագրեսիվ վարքի հոգեբանություն»,
- Ս.Ա. Մարության, Ա.Մ.Դալլաթյան, «Նախադպրոցական մանկավարժություն»,
- Ա.Խուդոյան, «Խաղաթերապիա»,
- Ղազարյան Գ.Յ., Գալստյան Ա.Ս., Մուրադյան Ե.Բ., «Չեփաթաթերապիայի տեսություն ու պրակտիկա»,
- А.А Корниенко, «Детская агрессия»,
- <https://hy.m.Wikipedia.org>,
- <https://chalikyan.home.blog>,
- <https://arev.Wordpres.com>